22.09.2020

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ <<ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ>> ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն կրթություն.
2. Հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3. Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (իրավական ակտերի ցանկը տրամադրվում է դիմում լրացնելիս):
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի զարգացման և բարեփոխման հայեցակարգ (1,5-2 էջի սահմաններում):

Գլխավոր տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- ռուսերենի կամ անգլերենի կամ գերմաներենի կամ ֆրանսերենի իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2020 թվականի հոկտեմբրի 30-ին, ժամը 11:00, Նախարարության շենքում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3):

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում).
2. մեկ լուսանկար 3X4 չափի.
3. քաղվածք աշխատանքային գրքույկից կամ աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (հրաման, տեղեկանք).
4. ինքնակենսագրություն.
5. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
6. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
7. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
8. կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).
9. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
10. հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).
11. բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

12. քաղաքացին դիմումում լրացնում է հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ պաշտոնում նշանակվելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Քաղաքացին պատճեններով ներկայացվող փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև դրանց բնօրինակները, որոնք պատճենների հետ համեմատվելուց հետո վերադարձվում են քաղաքացուն:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են աշխատանքային օրերին՝ 2020 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 22-ը ներառյալ՝ ժամը 9.30-ից 13.00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամարներ՝ 010-511-355, 010-511-318, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՀՀ կառավարություն 2005 թվականի հունվարի 25-ի <<Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> N 224-Ն որոշում